



ՀԱՅՐ ԶԱԻԷՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Դոկտոր Աստուածաբանութեան
Միացեալ Նահանգներ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Սիրելի Հայորդի,

Կը մօտենայ Հայաստանի քրիստոնէութեան դարձի 1700ամեակը, զոր ազգովին պիտի տօնենք 2001 թուականին: Հայ ժողովուրդը իր հոգեւոր եւ մտաւոր թագաւորութեանց տիրացաւ իր հարազատ մօրմէն՝ Հայաստանեայց Մայր Եկեղեցիէն, որ մեր ցեղային ժառանգութեան մէջ, հայ արիւնէն եւ հայ լեզուէն ետքը, ամենէն կենսական դերը կատարած է մեր ժողովուրդի կեանքին մէջ, ահա 17 դարերէ ի վեր, մեր հայրենիքէն ներս եւ ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան մէջ:

Հայաստանեայց Եկեղեցին հիմնուեցաւ 301 թուականին, երբ Հայաստան աշխարհ, առաջինը ազգերու մէջ, քրիստոնէայ դարձաւ ազգովին ու հիմնադրեց առաջին եկեղեցին յանուն Ս. Էջմիածնի 303 թուականին: Անկէ 250 տարիներ առաջ արդէն քրիստոնէութիւնը գաղտնի կը քարոզուէր առաջին Առաքեալներու ձեռքով, Թադէոսի եւ Բարթողիմէոսի, որոնք ուղղակի առաքեալներն էին Յիսուսի Քրիստոսի, որուն պատճառաւ ալ մեր Մայր Եկեղեցին ճանչցուեցաւ որպէս Առաքելական Եկեղեցի, այսինքն սկսած երկու առաքեալներէն, որոնց քարոզութեան արգասիքին վրայ, յետոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ Գ. թագաւոր պետականացուցին քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ, Մայր Եկեղեցին եղաւ Հայաստանեայց Եկեղեցին, այսինքն Հայաստանցիներու եկեղեցին, հիմնադրուած մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի իսկական ցուցմունքով, որ իջաւ Արարատեան դաշտ մեր հաւատքի հօր Ս. Գրիգոր Լուսաւորիչի աղօթքներուն ընդմէջէն, ու ցոյց տուաւ այն վայրը ուր հայ ժողովուրդին մնայուն ուխտավայրը պիտի կառուցուէր:

Այս եղաւ, ուրեմն, մնայուն կայքը հայ քրիստոնէութեան, դառնալով անաղարտ, հարազատ եւ բնիկ տունը հայութեան, հոգեւոր վերին իշխանութիւնն ու Մայրը հայաստանցի քրիստոնէայ ազգին, որմէ ծնան ու ծաղկեցան սերունդներ շարունակ: Ահա, այդ նոյն Մայրը՝ Հայ Եկեղեցին, իր անցեալի փառքովն ու պատուով կը պայծառանայ այսօր մեր ժողովուրդին մէջ, Հայաստանի իր հարազատ հողին վրայ, ուր ազատութեան եւ անկախութեան շունչը նոր կեանք կը ներարկէ հայորդիներուն, հակառակ հոն մուտք գործած օտար եւ վնասակար աղանդաւորներուն, որոնք սրած իրենց ախորժակները կ'ուզեն խել հարազատ հայորդիներդ իրենց հարազատ Մօրմէն՝

Հայ Եկեղեցիէն: Այդ փորձը սակայն ձախողած է անցեալին ու պիտի ձախողի նաեւ ներկայիս, քանի որ աշխարհն ամբողջ գիտէ թէ Հայաստանեայց Մայր Եկեղեցին, հաստատուած իր մայր հողին վրայ 17 դարերէ ի վեր որպէս ազգային սուրբ հաստատութիւն, տուած է հայ ժողովուրդին ո՛չ միայն կրօնական խարիսխ քրիստոնէական ընդհանուր եկեղեցոյ ընտանիքին մէջ, այլ նաեւ անոր հովանիին տակ ազնուացուցած է ու ամրացուցած հայ ժողովուրդին ընտանեկան եւ մշակութային կենցաղը:

Այս պատճառաւ, սիրելի Հայորդի, գիտցիր որ հայ ժողովուրդը եւ Հայ Եկեղեցին նոյնացած են իրարու հետ մեր պատմութեան բովանդակ ընթացքին, մինչեւ այսօր: Անոնք որոնք հեռացած են Հայ Եկեղեցիէն, դառնալով հոռմէադաւան կամ բողոքական, կտրած են իրենց կապը մեր հարազատ Մայր Եկեղեցիէն, ու իրենց հայեացքը շեղած Ս. Էջմիածնէն դէպի այլ ուղղութիւն: Ինչպէս կարելի է զատուիլ եւ մանաւանդ զատել զաւակները Մայրենի Եկեղեցիէն, որ սկիզբէն արդէն նահատակութեամբ մկրտուեցաւ ու վերածննդեամբ մկրտեց իր որդիները Սուրբ Հոգոյ աւագանէն: Յիշէ՛, Հայորդի, թէ ինչպէ՛ս Վարդանանք, Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Սահակ Հայրապետի հարազատ ու անմիջական սերունդները, գոչեցին Պարսից արքունիքին դէմ, ըսելով որ մեր Եկեղեցին մեր մայրն է, իսկ մեր հայրը՝ Սուրբ Աւետարանը: Այս է եղած հայ ժողովուրդին դաւանանքը դարերէ ի վեր ու կը մնայ նոյնը նաեւ այսօր, հեռու օտարադաւան հոսանքներէ, վասնզի վաւերական պատմութեամբ, քրիստոսահիսմն մեր եկեղեցին չընդունիր ուրիշ այլ ոք քան միակ հիմնադիրը Հայ Եկեղեցոյ՝ նոյնինքն մեր Փրկիչը, չընդունիր ուրիշ այլ տեղ քան իր հարազատ Սուրբ Էջմիածինը:

Յիշէ՛, Հայորդի, որ Հայ Եկեղեցոյ կապը հայ ժողովուրդին հետ անորանալի եւ անխորտակելի իրականութիւն մըն է: Այս իրականութիւնը պատմական է եւ անխոցելի:

Հայեր իրենց գոյութիւնը պարտական կը համարին իրենց մօր, Հայ Եկեղեցիին, քաջ գիտնալով որ ան օժտուած է խորունկ կրօնականութեամբ, հոգեւոր կենսական արժէքներով, Աւետարանի դասերով եւ մեր Հայրապետներու, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ մեր ներկայ Գահակալը՝ Վազգէն Առաջինի խնկաբոյր քարոզութեամբը:

Վերջերս, Հայորդի, հրապարակ ելաւ Հայ Կաթողիկոսներու Հոգեւոր Տիրոջ մէկ «Թուղթ Շրջաբերական»ը Պէյրութէն, ուր կը կարդանք որ անոնց «կարօտագին աչքերը կը սեւեռին սփիւռքի անձայրածիր տարածութիւններէն անդին, դէպի Հայաստանի նորաբաց» իրենց առաքելութիւնը: Անոնք, զօրակոչի ենթարկած իրենց ափ մը հոռմէադաւան հոգեւորականները, յանուն Հոռմի Կաթողիկ Եկեղեցոյ, ախորժակնին սրած, կ'ուզեն խուժել Հայաստան խանգարելու համար Հայաստանեայց Մայր Եկեղեցոյ աստուածահաճոյ գործը եւ մոլորեցնելու անոր հարազատ զաւակները, այն պատրուակին ներքեւ որ իրենց անտէր մնացած հօտը կ'ուզեն հովուել:

Պիտի հարցնես, անշուշտ, որ երբ Հայ Կաթողիկոսներ իրենց Մայր Եկեղեցին լքեցին Աբրահամ Արծիւեանի օրով 1740ին, ինչպէս կը հաստատէ «Թուղթ»ը, ինչ երեսով եւ ինչ համարձակութեամբ այսօր կը յանդգնին իրենց լքած հայրենիքն ու անոր հարազատ Եկեղեցին «վերադառնալ», յայտնապէս իրենց հոռմէադաւանութիւնը քարոզելու համար այնտեղ ուր հիմնուեր է արդէն Հայ Եկեղեցին Արծիւեանէն 1500 տարիներ առաջ:

Հիմնական հարցը, Հայորդի, այս է ուրեմն, թէ ե՞րբ է Հայ Կաթողիկոսներուն ծննդեան տարին: Թուականն է 1740, երբ յիշեալ Աբրահամ Արծիւեան

հայ եպիսկոպոսը «քանի մը քահանաներով եւ Կիլիկիոյ անունով» հոռմէադաւան կաթողիկոս հռչակուեցաւ, երբ իսկոյն «ամձամբ Հոռմ գնաց եւ Բենեդիկտոս ԺԴ Պապին ներկայացաւ իբր թէ ամենայն հայոց կաթողիկոս ըլլար» (Օրմանեան, Հայոց Եկեղեցին, 78): Պապը գիտնալով հանդերձ անհիմն գործին իսկութիւնը, իրեն հպատակողները քաջալերելու համար «իր կողմէ հայ կաթողիկոսն որ պատրիարքութիւն կամ կաթողիկոսութիւն մը ստեղծեց 1742 թուականին, պաշտօնապէս եւ ըստ ամենայնի Հոռմի աթոռին ենթարկեալ ըլլալու պայմանով» (անդ): Երբ այս կերպ է հայ կաթողիկոսներու ծնունդը, ճիշդ եւ միայն 250 տարեկան հոգեւոր իշխանութիւն մը, հեռու Հայաստանէն եւ խզուած Ս. Էջմիածնէն, ենթակայ օտար, թէ իսկ պատկառելի Հոռմէական Կաթողիկ Եկեղեցոյ, ի՞նչպէս հաւատալ «անոր մշտագոյ ներկայութեանը Մեծ Հայքի շրջանի Գուգարք ու Տաշիրք» մահանգներուն մէջ, զորս «Թուղթ»ը Հայ Կաթողիկոսներուն սեփական կը դարձնէ այնքան անյագօրէն: Ի՞նչպէս հաւատալ պատմական այսպիսի կոպիտ անճշդութիւններու, երբ այնքան հեշտօրէն կը թոյն ու կ'անցնին Հայաստանեայց Եկեղեցոյ իսկական պատմութեան երկարաձիգ հանգրուաններուն վրայէն, որոնց վրայ Հայ Եկեղեցին իր դրոշմը դրեր է առաքելական յաջորդականութեամբ, եւ ո՛չ թէ Արծիւեանի սնանկութեամբ, հայ հողին, հայ ժողովուրդին եւ հայ սփիւռքին վրայ, կանոնական հիմունքով, իրական նուիրապետական կարգով եւ պատմականօրէն ճշդուած հայրապետներու շարքով ու բիրաւոր տաճարներու անլուելի զանգակատուններով:

«Վերադառնանք», կ'ըսէ Հայ Կաթողիկոսներու Հոգեւոր Տէրը, «վերադառնանք Հայրենիք ստանձնելու մեր Ազգին հոգեւոր առաքելութիւնը»:

Հա՛ւ գիտցիր, Հայորդի, որ ճշմարիտ եւ անկեղծ վերադարձը Հայրենիք այդ կերպ չի կրնար ըլլալ, այլ միայն կարելի կ'ըլլայ պատուաւոր կերպով, այնպէս ինչպէս վերադարձաւ Մաղաքիա Վարդապետ Օրմանեան 1879ին, որ լքեց հոռմէադաւանութիւնը եւ կամովին ու լրիւ համոզմամբ իր քահանայական կարգով մտաւ Հայաստանեայց հարազատ եկեղեցոյ ծոցը, իր հետ վերադարձնելով 75 հոռմէադաւան հայեր եւս Հայ Եկեղեցոյ գիրկը, ուր փայլեցաւ ան ու փայլեցուց Մայր Եկեղեցին բացառիկ նուիրումով, անկեղծ սիրով եւ մեծագործ արդիւնքներով: Այս կերպ վերադարձ միայն վայել է Հայ Կաթողիկոսներուն, եթէ կ'ուզեն մաս կազմել Հայրենիքի նորագոյն առաքելութեան՝ հովանիին ներքեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Հայորդի, այսքանով սակայն չի վերջանար Հայ Կաթողիկոսներուն զորակոչը: Անոնք «անյետաձգելի» կը գտնեն «ժամը որ շնորհաց ժամն է բոլորիս համար», կ'ըսեն, երբ պիտի արշաւեն Հայաստան ուր «Առաքելութեան անծայրածիր դաշտ մը բացուած է» եղեր իրենց առջեւ, եւ ուր «բազմահազար Հայ Կաթորիկէներ» (տառասխալը իրենցմէ) իրենց կը սպասեն անհամբեր:

Հայ Կաթողիկոսներու այս նորագոյն իղձը հետեւանքն է անշուշտ Հոռմի Սրբազան Պապին ու Վատիկանին քաջալերութեան, առանց որ անոնք նախաձեռնարկ եղած ըլլան, սակայն առանց որոնց հայ հոռմէադաւաններ ոչինչ կրնան ընել: Հոռմի Յովհաննէս Պօղոս Բ Սրբազան Քահանայապետը 1991 Հոկտեմբերին նոր վիճակ մը հաստատել է Հայաստանի, Վրաստանի ու Արեւելեան Եւրոպայի Հայ Կաթողիկոսներուն համար, զայն յանձնելով Վենետիկի Մխիթարեան հայրերէն՝ Ներսէս Վրդ. Տէր Ներսէսեանին: Նման կարգադրութիւն մը առանց Հայաստանի եւ Հայ Եկեղեցոյ Պետի գիտութեան եւ հաւանութեան անշուշտ թէ խանգարում եւ ոտնձգութիւն պիտի ստեղծէր, շփոթ եւ բարդութիւն պիտի յառաջացներ Հայաստանի ժողովուրդէն ներս:

Այս բոլորով մէկտեղ, գիտցի՛ր, Հայորդի, որ մեր Վեհափառ Հայրապետը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա թոյլատրած է ու հաւանած որ Միաթարեան հայրերէն ոմանք գային Հայաստան հովուելու այն փոքրաթիւ կաթողիկէները որոնք կ'ապրին Հիւսիսային աւաններուն մէջ: Սակայն այս հայրական հոգածու թոյլտուութիւնը շատ քիչ էր անոնց «անծայրածիր» ախորժակներուն համար: Ահա թէ ի՛նչպէս իրենց տրուած հայրական ձեռքը տարբեր ձեռնոցներով համբուրեցին անոնք աներախտագէտ ոգիով:

Հայորդի, Հայաստանեայց Եկեղեցոյ պարտքն էր անշուշտ բողոք բարձրացնել այս տեսակ ինքնակոչ արշաւանքի մը դէմ, պահանջելով որ իսկոյն յետս կոչեն առնուած որոշումները, որուն հետեւանքով, յանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու Հայաստանի մեր ժողովուրդին, Ամերիկայի եւ Գանատայի Առաջնորդ երեք Եպիսկոպոսներն ու Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքութեանց ներկայացուցիչները անձամբ Վատիկան գացին 1992 Հոկտեմբեր 27ին ու գրաւոր ազդու բողոքագիր մը յանձնեցին Վատիկանի Կարտինալներուն, անոնց հետ իրենց պաշտօնական տեսակցութեան ընթացքին, որմէ ետք Հայ Եկեղեցոյ պատուիրակութիւնը ընդունուեցաւ նաեւ Սրբազան Պապին կողմէ:

Հայ Եպիսկոպոսները նախ յայտնեցին որ Մայր Աթոռի Եպիսկոպոսական ժողովը, նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, քննած էր Հայ Կաթողիկ Պատրիարքին «Թուղթ Շրջաբերական»ը եւ գտած շարք մը անհիշդ հաստատումներ, պատմականօրէն սխալ եւ խեղաթիրեալ: Անոնք ուշադրութեանը յանձնած են Վատիկանին որ Հայ Կաթողիկէներ իրատուք չունին Հայաստան մտնելու սանձարձակօրէն, հոն «առաքելութեան անծայրածիր դաշտ մը բացուած տեսնելով»: Այս, կը հասկնաս Հայորդի, արդէն ինքնին անարգանք մըն է շարտուած Հայաստանեայց Մայր Եկեղեցոյ երեսին:

Հայորդի, սորվեցուր ազգակիցիդ որ Հայ Եկեղեցոյ դաւանանքը Առաքելական է, որ միակ գլուխ եւ հիմն կ'ընդունի զՔրիստոս, ինչպէս Աւետարանը կը քարոզէ ու մեր Հայրերը կը բացատրեն: Մեր Հայրապետներն ու թարգմանիչները, Վարդանանք ու Ոսկեդարեան պատմիչ սուրբ մատենագիրները լիաբերան Աւետարանի հոգին եւ Քրիստոսի խօսքը աւանդեցին մեզի իրենց պարգութեամբն ու վստմութեամբը: Այս ճամբով, Սիրելի Հայորդի, եկած հասած է Հայոց Եկեղեցին քեզի եւ Հայաստանի որդիներու: Զայն պէտք է պահպանէք բոլոր սրտով եւ հոգիով, կորովով եւ համոզումով:

Մի՛ մոռնար նաեւ, Հայորդի, որ հայ Եկեղեցին, անաղարտ եւ մաքուր, է նաեւ վառարանը հայ մշակոյթին: Հայ Եկեղեցին է որ խօսուած հայերէնը գրաւոր լեզուի վերածեց, հայացուց Աստուածաշունչ Մատեանը, ստեղծեց Հայաստանի բնիկ եւ յատուկ ճարտարապետութիւնը, ձեւ ու կերպարանք տուաւ սրբազան երգեցողութեան եւ գեղարուեստի բազմադիմի ճիւղերուն: Հայ Եկեղեցին, վերջապէս, եղաւ Հայ ժողովուրդին խաղաղութեան խորհրդանշիչը:

Այսպէ՛ս, ուրեմն, պիտի դիմենք դէպի մեծ դարադարձը Հայաստանեայց Մայր Եկեղեցոյ այն խոր համոզումով որ Հայ ժողովուրդն ու Հայաստանի Հանրապետութիւնը, հովանիին ներքեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, միակամ ու միասիրտ, մասնակցութեամբը սփիւռքի բովանդակ հայութեան, պիտի պանծացնեն յիշատակը մեր Մեծ Սուրբին՝ մեր հաւատքի Հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի: